

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Վարդան Մակեյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 02 դեկտեմբերի 2016 թվականի
թիվ 32-Ն որոշմամբ

ՓԱՆԻԿ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	5
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	14
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....	15
4..... ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	15
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....	18
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՍՅԱԾՐԱԳԻՐԸ.....	25
7. ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ.....	26
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	29
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	30
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	34
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ.....	35
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	36

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿԸ	36
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Ներկայացվող ՀՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Փանիկի համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

Համայնքի 2017-2021թթ. ՀՀԾ-ն ներկայացնում է Փանիկի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀՀԾ-ն ներառում է նաև Փանիկի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Փանիկի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Փանիկի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային

նուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀՀՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավոր մանաղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀՀՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀՀՀԾ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀՀՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀՀՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՀՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀՀՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀՀՀԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ,

Փանիկ գյուղը գտնվում է Շիրակի դաշտավայրում, ծովի մակարդակից 1700 մ. բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1810-1812 թթ Արևմտյան Հայաստանի Տարոն և Ալաշկերտ գավառներից տեղահանված գաղթականների կողմից: Մինչև 1924 թվականը գյուղը անվանվել է Քյավթառլու: 1924 թվականին գյուղը վերանվանվել է Փանիկ: Փանիկի եկեղեցին կառուցվել է գյուղի հիմնադրման տարիներին և համարվում է պատմամշակութային կոթող: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1784.36 հեկտար: Կլիմայական պայմանները բարենպաստ են հացահատիկային մշակաբույսերի բանջարաբոստանային կուլտուրաների և պտղի արտադրության համար:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2945 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 1409 և կանայք՝ 1536:

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2945
	Տղամարդիկ	1409
	Կանայք	1536
	0-4 տարեկան	126
	5-6 տարեկան	78
	7-10 տարեկան	134
	11-14 տարեկան	141
	15-17 տարեկան	142
	18-22 տարեկան	119
	23-45 տարեկան	1212
	46-62 տարեկան	714
	63 և բարձր տարիքի	279
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	335
	Տարիքային և աշխատանքային	252
3.	Փախստականներ	
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	24
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	83
	Մանկուց հաշմանդամներ	7
9.	Աշխատունակներ	

10.	Զբաղվածներ	
11.	Գործազուրկներ	
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	136
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	7
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքներ իթիվը, այդթվում՝	28
	Անօթևան ընտանիքներ	
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	75
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	400
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	500

Փանիկի համայնքի հիմնական ցուցանիշների գնահատում և կանխատեսում՝ հավելված 1-ում

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարը և ավագանին: Փանիկի համայնքի համայնքապետարանում աշխատողների թիվը կազմում է 13 աշխատակցից՝ ներառյալ տեխնիկական սպասարկում իրականացնող անձիք:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատած՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 16-Ա , թիվ 17-Ա որոշումներով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Փանիկի համայնքապետարանի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնիանվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով անձնակազմը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	225000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	170000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	180000
4.	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ (2.3-1)	1	1	169000
5.	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	146000
6.	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	1	96000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
7.	Հարկային գործակալ	1	1	114000
8.	Գրադարանավար	1	0.5	73000
9.	գործավար	1	1	82000
10.	վարորդ	1	1	80000
11.	հավաքարար	1	0.5	73000
12.	Զոդող բանվոր	1	1	75000
13.	Խմելու ջրագծերի կարգավորող	1	0.5	73000
14.	Տրակտորիստ	1	1	75000

Փանիկի համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ հաստատված համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 17-Ա որոշմամբ (աղյուսակներ 3-4)

Աղյուսակ 3. << Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	95000	95000
2.	Դաստիարակ	4	7	73000	292000
3.	Դաստիարակի օգնական	0.75	4	73000	219000
4.	Երաժշտության ուսուցիչ	0.7	1	78000	54600
5.	Խոհարար	0.75	1	73000	54750
6.	Խոհարարի օգնական	0.75	1	73000	54750
7.	Լվացարար	0.75	1	73000	54750
8.	Բուժքույր	0.75	1	73000	54750
9.	Տնտեսվար	0.75	1	73000	54750
10.	Հաշվապահ	1	1	73000	73000
11.	պահակ	1	1	73000	73000
	ընդամենը	12	20		998950

Աղյուսակ 4. << Փանիկի արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	95000	95000
2.	Դաշնամուրի ուցուցիչ	2	2	72600	145520
3.	Քանոնի ուսուցիչ	1	1	77963	77963
4.	Զուրթակի ուսուցիչ	1	1	72813	72813
5.	Խմբավար	2	2	77963	155926
6.	հաշվապահ	1	1	77903	77903
7.	Պահակ	1	1	72760	72760
8.	Հավաքարար	0.5	1	72760	36380
	ընդամենը	9.5	10		688265

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն է համարվում այն գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

- ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
- բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
- գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
- դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
- ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը:

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փանիկի համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները ներկայացված են **հավելված 3-ում**: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-ը համագործակցում է տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 5.5 կմ ընդհանուր երկարությամբ կենտրոնական փողոցները ասֆալտապատ են, որի որոշ հատվածներ վերանորոգման կարիք ունի : Գիշերային լուսավորության ցանցը ձգվում է կենտրոնական փողոցների ամբողջ երկարությամբ:

Համայնքում կենցաղային աղբը հավաքվում, տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Համայնքում աղբահանությունը կատարվում է ամիսը 2 անգամ:

Աղյուսակ 5. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բազմաբնակարան բնակելի շենքերի		Բնակելի առանձնատների	
		թիվը	բնակարանների թիվը	թիվը	ընդհանուր մակերեսը
1.	Փանիկ	1 շենք, 1 հարկանի	4 բն.	709	105651

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1784.36 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1418.59 հա, բնակավայրերի հողերը՝ 320.44 հա, արտադրական նշանակության հողերը՝ 21.35 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 13.07 հա, անտառային հողերը՝ 0.0 հա, հատուկ պահպանության հողերը՝ 4.95 հա, հատուկ նշանակության հողերը՝ 0.0 հա և ջրային հողերը՝ 5.96 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմում է 0.7 հա

Համայնքի հողային հաշվեկշիռն ներկայացված է **հավելված 4**-ում:

1.7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնականում մշակվում են հացահատիկային մշակբույսեր և կերային կուլտուրաներ: Հողատարածքների դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության համար: Հացահատիկային կուլտուրաների, բանջարաբոստանային կուլտուրաների, պտղի արտադրությունը և անասնապահությունը հանդիսանում են Փանիկի համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտներ: Սակայն այս ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որի պատճառներից է ոռոգման ջրի սակավությունը և ներքին ցանցի քայքայվածությունը, գյուղատնտեսական արտադրության ապրանքների սպառման շուկայի բացակայությունը, դեռ ԽՍՀՄ-ի տարիներին արտադրված ու մինչև օրս շահագործվող գյուղ. տեխնիկայի մաշվածությունը, ինչպես նաև ցրտահարությունը և կարկտահարությունը: Տեղակայված երկու հակակարկտային կայանքները ապահովում են մոտ 150 հա ծածկույթ, որը շատ ցածր ցուցանիշ է համեմատած հողատարածքների մակերեսի հետ:

Անասնապահությամբ զբաղվող խոշոր ֆերմերային տնտեսություններ համայնքում չկան, իսկ միջին ֆերմերային տնտեսությունների թիվը հասնում է հինգի : Համայնքում նկատելի է մեղվապահության զարգացման տեմպ:

Հավելված 5-ում ներկայացված է համայնքում առկա անասնազխաքանակի վերաբերյալ տվյալներ:

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- բարեկարգել զբոսայգին
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9.ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փանիկի համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ, մայրաքաղաքից՝ 110 կմ: Համայնքը վարչական սահմաններում ունի 5.5 կմ երկարությամբ ասվալտապատ ճանապարհ, ավելի քան 20 կմ գրունտային ճանապարհ, ավելի քան 25 կմ դաշտամիջյան գրունտային ճանապարհ, 3 երկաթբետոնյա կամուրջ, մեկ քարային կամուրջ և մեկ քարային երկաթուղու կամուրջ: Գյումրի – Արթիկ երկաթուղին անցնում է համայնքի հարավ-արևմտյան մասով: Մարզկենտրոնի հետ տրանսպորտային կապի հաճախականությունը 1-ից 1.5 ժամ, Արթիկ քաղաքի հետ 30 րոպե, մայրաքաղաքի հետ օրական 2 անգամ:

Նախատեսվում է համայնքի ասվալտապատ և գրունտային ճանապարհների ամենամյա վերանորոգման, հարթեցման աշխատանքներ:

Համայնքի բնավիչների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացված են **հավելված 6**-ում:

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փանիկի համայնքում առևտրային գործունեություն իրականացվում են անհատ ձեռնարկատերերը: Համայնքի տարածքում բացօթյա առևտրի կետեր կամ շուկաներ չկան:

Համայնքի տարածքում առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են **հավելված 7**-ում:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Փանիկի համայնքում գործում է <<Փանիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը: Դպրոցի մասնաշենքը վիճակը գնահատվում է բավարար, դասասենյակները ապահովված են համապատասխան գույքով, լաբորատոր սարքավորումներով ու համակարգչային տեխնիկայով: Դպրոցն ունի վերանորոգման կարիք: Դպրոց հաճախող աշակերտների թիվը կազմում է 400 աշակերտ, ուսուցչական կոլեկտիվի և տեխնիկական անձնակազմի թիվը 40: Վերանորոգման և գույքի կարիք ունի դպրոցի մարզադահլիճը:

1.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքային ենթակայության տակ գտնվող մշակույթի տունը չի գործում ավելի քան 10 տարի: Շենքը գտնվում է քանդված վիճակում: Օգտագործվում է շենքի մի հատվածը որպես խաղասենյակ: Համայնքի ամենամյա մշակույթային միջոցառումների իրականացման տարեկան աշխատանքային պլանի համաձայն իրականացվում են միջոցառումներ:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է <<Փանիկի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ը որը սպասարկում է Փանիկ գյուղին և հարակից ևս 6 գյուղի: Առողջության կենտրոնի մասնաշենքում գործում է ատամնաբուժական կենտրոնը: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ:

1.14 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 130 բնակիչ աշխատում են պետական, համայնքային կամ մասնավոր կառույցներում, ավելի քան 500 բնակիչ մեկնում են արտագնա աշխատանքի: Համայնքի 136 ընտանիք հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: Համայնքապետարանը հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին: ՏԻՄ-ը հնարավորինս աջակցություն է ցուցաբերում ազգաբնակչությանը աշխատատեղերի ավելացման հետ կապված, որը շատ կարևոր է ազգաբնակչության սոցիալ -տնտեսական վիճակի բարելավման և արտագաղթի տեմպի նվազման հարցում:

1.15 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը <<Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովուման, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդման և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացման նպատակով կատարում է օրենքով սահմանված պարտադիր գործառույթներ: Համայնքապետարանում և համայնքի կենտրոնական հատվածում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը: Ազգաբնակչությունը տեղական ինքնակառավարմանը մասնակցում է ավագանու և համայնքու հանրային բաց լսումների և քննարկումների միջոցով:

Համայնքի ավագանին.

- ✓ 20.05.2016թ. N 14-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 20.05.2016թ. N 15-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 20.05.2016թ. N 16-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

1.16 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են Համայնքային արագ արձագանքման թիմը, համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք

կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղաքաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Փանիկի համայնքի քաղաքաշտպանության շտաբի պետի պաշտոն է համարվում համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղաքաշտպանության շտաբի առանձին ստորաբաժանումները՝ ստորաբաժանման պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացան գործում բնակչության էվակուացման համար մշակված է տարհանման պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Համայնքում եղած թաքստոցները /նկուղները/ հաշվառված են համայնքապետարանի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացում:
- ✓ Ոռոգման ջրի ներքին ցանցի անբավարար վիճակ, արտաքին և ներբնակավայրային ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- ✓ Գյուղ մթերքների վերամշակման և իրացման դժվարություններ
- ✓ Համայնքի գլխավոր հատակագծի մշակման անհրաժեշտություն
- ✓ <<Փանիկի նախդպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի վատ շենքային պայմաններ
- ✓ << Փանիկի արվեստի դպրոց> ՀՈԱԿ-ի վատ շենքային պայմաններ
- ✓ << Փանիկի մշակույթի տուն>> շենքի մեծ մասը քանդված է:
- ✓ միջնակարգ դպրոցի մարզադահլիճի շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ Փողոցների գիշերային լուսավորվածության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Մշակութային հարուստ ավանդույթներ
- ✓ << Փանիկի տիրամայր եկեղեցի>>-ն և եկեղեցուն կից օրաթորյան
- ✓ Ատամնաբուժական կենտրոնի առկայություն
- ✓ <<Փանիկի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի առկայություն
- ✓ <<Փանիկի անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոն>> -ի առկայություն
- ✓ <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի առկայություն

- ✓ <<Փանիկի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի առկայություն
- ✓ <<Փանիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի առկայություն
- ✓ Հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաների, պտղի արտադրության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններ
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Աշխատատեղերի պակաս
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների՝ (փողոցներ՝ երկրորդական և դաշտամիջյան, Ոռոգման ներքին և միջհամայնքային ցանց, համայնքային ենթակառուցվածքի տակ գտնվող շենք-շինություններ) ոչ բավարար վիճակ
- ✓ Բնական աղետներ՝ երկրաշարժ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հեղեղներ և ջրհեղեղներ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Գյուղատնտեսական մթերքների վերամշակման, արտադրության խթանման, ընդլայնման և զարգացման հնարավորություն
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացում
- ✓ Արտադրության խթանում, զարգացում

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական, տարերային աղետների անկանխատեսելի պատճառած վնասներ
- ✓ Գործազրկության մակարդակի աճող տեմպ
- ✓ Արտագաղթ՝ հատկապես երիտասարդ ընտանիքների

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Փանիկի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է նաև հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Փանիկի համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության, արտադրության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների

համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Փանիկի համայնքը սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է՝ հաշվի առնվելով գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների, արտադրության ոլորտները, ինչպես նաև ազգաբնակչության պոպուլյացիայի հնարավորությունները:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բոլոր ռեսուրսները, զարգացնելով առևտրի, արտադրության և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն** են՝

- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը
- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու և ոռոգման ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը

- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը:
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Ունենալ մարմնամարզական գույքով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Նպաստել գյուղատնտեսության և արտադրության զարգացմանը

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ՝ պարարտանյութերի, սերմացուների, թունքիմիկատների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռք բերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ: Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում: Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի քաղաքացիության պաշտպանության պլանի համաձայն, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ6. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	58262.2	69124.7	70318.6	78583.0	85933.0	94083.0	94583.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	58262.2	69124.7	70318.6	78583.0	85993.0	94083.0	94583.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	8856.2	11015.7	12209.6	13690.0	14790.0	16090.0	16590.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	4406,0	4550,2	4590,0	4590,0	4590,0	4590,0	4590,0

	Գույքահարկ շենքերի և շինությունների համար							
	Հողի հարկ	4406,0	4550,2	4590,0	4590,0	4590,0	4590,0	4590,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	3770,2	5785,5	6701,6	8000,0	9000,0	10000,0	10500,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3770,2	5785,5	6701,6	8000,0	9000,0	10000,0	10500,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	680,0	680,0	918,0	1100,0	1200,0	1500,0	1500,0
	Տեղական տուրքեր	680,0	680,0	918,0	1100,0	1200,0	1500,0	1500,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
